

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Սյունիքի մարզկենտրոնում մեկնարկեց Հայոց ազգային բանակի ձմեռային թարմացման գործընթացը

Փետրվարի 9-ին մարզկենտրոն Կապանում մեկնարկեց ՀՀ ազգային բանակի ձմեռային թարմացման գործընթացը:

Ավանդույթի համաձայն՝ զորակոչիկների առաջին խումբը ծառայության մեկնեց Գարեգին Նժդեհի հուշահամալիրից՝ փոխարինելու պատերազմի բովով անցած ընկերներին: Հաբազատն ու մտերիմը, հարեանն ու ընկերը

եկել էին բարի խոսքերով բանակ ճանապարհելու հայրենիքի ապագա պաշտպաններին:

Տեղի ունեցավ օրվա խորհրդին պատշաճող հանրահավաք՝ մասնակցությամբ մարզային եւ համայնքային իշխանությունների, իրավապահ մարմինների եւ զինվորականության ներկայացուցիչների:

Հիմնականում Նախ օրինակի խոսքեր հղեց Վահանավանքի հոգեւոր հովիվ տեր

Ավետիք քահանա Մարտիրոսյանը՝ ինչեցնելով Տերունական աղոթքը:

ՀՀ պաշտպանության Նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար, փոխգնդապետ Վահե Աղալարյանն իր խոսքում ընդգծեց, որ այս զորակոչն իր բնույթով

Հարունակությունը՝ էջ 3

ՎՏԱՆԳԱԴՈՐ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՐԵԳԻՆ ՆՇՐԵՅ



Տգիտություն, եսակնություն եւ աշխարհաբաղաճիություն - ահա երեք հայրենասիրության անհաշտ թշնամիներից:

Առաջինի մասին պիտի չխօսեն:

Կոյրը մեղաւոր չէ, որ չի տեսնում:

Մտաւոր կուրություն եւ տգիտությունը:

Չգելի է եսասերը: Նա թշնամի է իր

նմաններին, իր հասարակության, մարդկության: Նա ստանում է՝ առանց տալու: Նա անիշխանական է, որովհետեւ իրաւունքներ ունի՝ առանց պարտականութիւնների:

Նա գող է, տգրուկ, որովհետեւ ապրում է ուրիշների հաշիւին: Իր յանցաւոր եսի մէջ փակած, ինչպէս խիսունը իր պատեանի մէջ, նա արհամարհում է եւ հեզնում այն ամենը, ինչ որ հենց այժմ անձնապէս չի շահեցնում, չի պարարտացնում:

Ուր շահ, ուր լաւ՝ այնտեղ հայրենիք:

Սա է նրա շնական նշանաբանը:

Այլ պիտի լինէր աշխարհը, եթէ գոյութիւն չունենար այդ մարդատիպ հրեշը՝ եսասերը: Դա է առաջին դասալիքը, դա է վախկոտը, փոքրոգին ու խաբէբան: Դա է բարձրացնում անձնական կաշի արժէքը, դա է պսակազրկում սրբութիւնները, իղեւնները, հայրենիքը:

Դա յաճախ փորձում է իր հոգու այլանդակութիւնները բողբոջել այս կամ այն մոլոր տեսութեամբ, այս կամ այն ուռուցիկ եւ գեղեցիկ խօսքով:

Բայց, ի զմուռ աշխատանք. նրա կեանքը, նրա բարոյական վարքագիծը գալիս է մատնելու հրեշ մարդու պատկերով: Եթէ մի երկրի ղեկն ու ղեկավարութիւնն ունենայի ձեռքիս, բոլոր եսասերներին, առնազը, կը գրկէի այդ երկրի հողից ու ջրից օգտւելու իրաւունքից: Որքան շատ եմ սրանք մի ժողովրդի մէջ, այնքան անապահով է նրա ապագան: Չկայ, մի հասարակութեան համար չկայ անելի մեծ չարիք՝ բան սրանց տխուր գոյութիւնը: Սրանց մասին է Հար Վազները ասել՝ «Մարդ, դու անելի քիչ արժես, բան այն շունը, որը նետւում է դեպի գողը, առանց վախենալու նրա հարածներին»:


II

**Հայաստան ասելիս այտերս
այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս
ծալվում են,
Հայաստան՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս
ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս
ծաղկում է,
Հայաստան՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս
լցվում են,
Հայաստան ասելիս թեւերս
բացվում են,
Հայաստան՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը
իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը
ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ**

Մեղրի համայնքի բնակիչների ջրի խնդիրը

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բնակիչների ջրի միջազգայնորեն երաշխավորված իրավունքը շարունակաբար լրջորեն խախտվում է աղբեղանական զինված ուժերի դիտավորյալ արարքներով:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հաղորդագրության համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը Մեղրի համայնքի բնակիչներից ստացել է զայրույթի ու անհանգստության ահազանգեր այն մասին, որ ավելի քան 5 տարի առաջ աղբեղանական զինված ուժերի ծառայողները փոխել են «Մեղրի» գետի Չվարագետ վտակի սարեից մուգվող հունը դեպի Նախիջեւան (Օրդուբադի շրջան): Արդյունքում, ստացվել է



այնպես, որ Սյունիքի մարզի Մեղրի եւ Ագարակ բնակավայրերում, ինչպէս նաեւ Նոնա-ձոր, Շվանիձոր, Ավանք գյուղերում լուրջ խնդիրներ են առաջանում՝ կապված խմելու եւ ոռոգման ջրի հասանելիության հետ: Այս բնակավայրերում Մեղրի համայնքի բնակչության մեծամասնությունն է:

Պաշտպանին խնդրի առնչությամբ անհրաժեշտ տեղեկություններ է ներկայացրել նաեւ Մեղրի համայնքի ղեկավարը, ինչպէս նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած պատվիրակությունն այդ ահազանգերը ստացել է Մեղրի համայնք 2021թ. հունվար ամսին կատարած այցի ընթացքում:

Հարցն այն է, որ Մեղրի համայնքի բնակավայրերի խմելու եւ ոռոգման ջուրը մշտապես ապահովվել է Մեղրի գետի հաշվին: Չվարագետ կամ Այրիջուր վտակը սկիզբ է առնում ծովի մակերեսային մոտ 3500մ. բարձրությունից՝ Չանգեզուրի լեռների հա-

Հարունակությունը՝ էջ 3

Խոզնավար. գյուղն արժանապատվորեն է կատարում սահմանապահի իր առաքելությունը, մնում է՝ պետությունը մտահոգվի գյուղի խնդիրներով

Սյունիքի համար ոչ սովորական ժամանակները յուրօրինակ աշխատանք են դիմում են հաղորդել շատերին, այդ թվում՝ նորանշանակ մարզպետին:

Մելիքսեթ Պողոսյանը պարբերաբար լինում է սահմանապահ բնակավայրերում՝ հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու եւ դրանցից բխող բայեր ձեռնարկելու նպատակով:

Փետրվարի 7-ին Խոզնավար գյուղում էր՝ Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շաղոմցի ուղեկցությամբ:

Երեք կողմից աղբբեջանական մարտական դիրքերով շրջապատված այդ բնակավայրն իր հոգսերով ու մտահոգություններով գրեթե նման է մարզի արեւելյան սահմանագիծի մյուս գյուղերին:

Պատահական չէ, որ գյուղամիջում հավաքված խոզնավարցիներին, որ եկել էին մարզպետի հետ հանդիպման, նախեւառաջ հետաքրքրում էին՝ ի վերջո ե՞րբ է պետական մակարդակով եւ ճշգրտորեն կատարվելու սահմանորոշում, ե՞րբ է գյուղի մերձակայքով ձգվող սահմանը լիարժեքորեն անցնելու Հայաստանի ուժային կառույցների հսկողության ներքո:

Մարդիկ դրական են վերաբերվում Գորիսի տարածաշրջանում պայմանագրային գումարտակ ձեւավորելու նախաձեռնությանը: Դա հնարավորություն կտա, որ գյուղաբնակներն օրինական ձեւով մասնակցություն ունենան բնակավայրի սահմանների պաշտպանությանը: Սակայն սահմանված տարիքային շեմը՝ մինչեւ 42 տարեկան, թույլ չի տալիս, որ գյուղի ամբողջ ներուժն օգտագործվի այդ նպատակով:

Մինչ այդ, սակայն, պետք է լուծել գյուղ մտնող խմելու ջրի ակունքների անվտանգության ապահովման խնդիրը: Խոզնավարը խմելու ջուր է ստանում Սեւ լճից ներքեւ գտնվող ջրակունքներից, որը շատ մոտ է Աղբբեջանին եւ չի վերահսկվում մեր կողմից: Ուստի եւ՝ հնարավոր վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է այնտեղ մարտական հերթապահություն կազմակերպել:

Հրատապ է նաեւ դեպի Ծիծեռնավանք տանող ճանապարհի ուղղությամբ (աղբբեջանական Քոստալար եւ Հաջիլար գյուղերի

տարածքների հարեւանությամբ) մարտական հենակետերի կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա վստահորեն օգտագործել գյուղին պատկանող արտավայրերն ու խոտհարքները:

Խոզնավարցիներին մտահոգում է Գորիս-Խոզնավար ավտոմայրուղու խնածախ-խոզնավար հատվածի անմխիթար վիճակը, ինչպես եւ Վերիշեն-Վաղատուր՝ համեմատաբար կարճ ճանապարհի գրեթե քանդված վիճակը, իսկ ձյունառատ օրերին՝ անանցանելի դրությունը:

Խոզնավարի տնտեսության մեջ գերակշռող տեղ ունի անասնապահությունը: Ընդ որում՝ վերջին մեկ տարում աճել է եւ խոշոր, եւ մանր եղջերավոր անասունների քանակը: Մինչդեռ նոր իրավիճակում անասնապահներն արտավայրերի խնդրի առաջ են կանգնած: Դա նկատելի է այսօր՝ մուրային շրջանում, իսկ ավելի սաստիկ է զգացվելու ամառային շրջանում: Մելիքսեթ Պողոսյանի կարծիքով՝ այժմվանից պետք է մտածել Սեւ լճի մերձակայքում կամ Սեծ Իշխանասարի ստորոտում գտնվող ամառային հարուստ արոտավայրերի արդյունավետ օգտագործման մասին:

Անասնապահությունը կանգնած է մեկ ուրիշ խնդրի առջեւ եւս. գրեթե ձախողված է անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավար Ներսես Շաղոմցի հավաստումը. «Եթե տարիներ առաջ 12 հիվանդության համար կար պետական պատվեր, հիմա պետպատվեր գործում է հինգ հիվանդության համար, ինչն ավելի ռիսկային է դարձնում անասնապահությունը»: Ըստ համայնքապետի՝ անասնաբուժական ծառայության ներկա գործելակերպը պետք է արմատապես փոխվի եւ հնարավորինս արագ:

Գյուղացիները կարգավորված չեն համարում նաեւ անասունների մթերման հարցը:

Գյուղացիները դժգոհություն հայտնեցին կադաստրային ծառայությունում տիրող քյուրկրատական բաշխչությունների վիճակի առիթով: 1992 թվականից մինչեւ հիմա գյուղացիների մեծ մասը չի կարողանում ստանալ իրենց իսկ պատկանող տների, այլ շինությունների եւ հողամասերի սեփականության վկայականները: Հափազրումների համար պահանջվող ոչ համաչափ գումարների



պատճառով մարդիկ չեն կարողանում իրականացնել պահանջվող չափագրումները:

Խոզնավարում քիչ չեն նաեւ սոցիալական խնդիրները: Նախադպրոցական տարիքի 24 երեխա ունեցող գյուղը չունի նախակրթարան: Երբեմնի ակումբը, որ խիստ անմխիթար վիճակում է եւ գյուղացիների հավաքատեղի է հատկապես ձմռան ամիսներին, տարիներ շարունակ որեւէ աշխատող չունի, եւ պահպանվում ու օգտագործվում է երբեմնի ակումբավար Արամ Բաղդասարյանի անձնակազմի ջանքերով:

Մելիքսեթ Պողոսյանն այցելեց Սուրեն Ավարդյանի՝ հրո ճարակ դարձած բնակարան: Հունվարի 21-ի հորդեհից հետո այդ ընտանիքը բնակվում է հարազատների տանը: Եվ մարզպետն ու համայնքապետը քննարկեցին տուժած ընտանիքին բնակարանով ապահովելու խնդիրը:

Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաբաղադական նոր իրավիճակում վտանգվել են նաեւ մեր լեռնաշխարհի գրչության հնամենի կենտրոն Խոզնավարի որոշ սրբավայրեր: Մասնավորապես, վտանգված է Շռնաղի խաչքարերի ճակատագիրը: Գյուղից մոտ 3-4 կմ հեռավորության վրա

գտնվող Ծիծեռնավանք տանող ճանապարհի վրա են գտնվում խաչքարերը: Ըստ խոզնավարցիների՝ խորհրդային ժամանակներում այդ վայրը մտնում էր Խոզնավարի տարածքի մեջ, իսկ հիմա աղբբեջանցիներն իրենց են համարում: Եվ մերձակայքում կազմակերպված աղբբեջանական մարտական հենակետն այլեւս անհնար է դարձրել հավատավորների այցը Շռնաղի սրբավայր:

Սահմանագծի վրա է հայտնվել նաեւ հազարամյակների պատմություն ունեցող բացառիկ վիշապաբարդ, որի ճակատագիրը նույնպես անորոշ է:

Մարզպետի հետ խոզնավարցիների հանդիպման ժամանակ արծարծվեցին բազմաթիվ այլ հարցեր եւս:

Մելիքսեթ Պողոսյանը հավաստիացրեց՝ հանգամանալից ուսումնասիրել բարձրացված հարցերը եւ փորձել լուծում տալ դրանց: Ընդ որում՝ փետրվարի 8-ին Տեղ գյուղում կայացել է Սյունիքի հարցերով մինչգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստը, որտեղ էլ քննարկման առարկա է դարձել խոզնավարցիների բարձրացրած որոշ հարցեր եւս:

»

Արթուր Դավթյանը Սյունիքում ամփոփել է մարզի դատախազության եւ իրավապահ մյուս մարմինների 2020թ. աշխատանքների արդյունքները

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն այցելել է Սյունիքի մարզ՝ ամփոփելու 2020թ. ընթացքում մարզի դատախազության գործունեությունը եւ մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ քննարկելու Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ստեղծված նոր իրողությունների պայմաններում մարզի բնակչության հիմնական իրավունքների պաշտպանության եւ անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման հետ կապված ակտուալ խնդիրները:

Մարզի դատախազությունում անցկացված խորհրդակցությանը, որին, բացի իրավապահ մյուս մարմինների մարզային ստորաբաժանումների ղեկավարներից, մասնակցել է նաեւ Սյունիքի մարզպետը: Մանրամասն քննարկվել են մարզի տարածքում հանցավորության ընդհանուր միտումները, բնակչության իրավունքների պաշտպանության առումով ստեղծված նոր մարտահրավերները, հանցագործությունների կանխման, բացահայտման ուղղությամբ իրականացված աշխատանքը, ինչպես նաեւ քրեական վարույթներով դատախազական գործառնությունների իրացման արդյունքները:

2020թ. Սյունիքի մարզում արձանագրվել է հանցագործության դեպքերի նվազում 5%-ով՝ 744 դեպք՝ 2019թ. 783 դեպքի դիմաց: Նվազել են հատկապես առանձնապես ծանր, ծանր եւ



միջին ծանրության հանցագործությունների դեպքերը:

2020թ. արձանագրվել է սպանության 1 դեպք՝ նախորդ տարվա 4 դեպքի դիմաց, սպանության փորձի դեպքեր չեն արձանագրվել, 5 դեպքով ավելացել են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ /13-8/:

Մարզում 7 դեպքով նվազել են սեփականության դեմ ուղղված հանցագործության դեպքերը: Նախորդ տարվա համեմատ էապես՝ մոտ 38%-ով նվազել են հատկապես բնակարանային գողությունները՝ /19-31/: Նման ցուցանիշը մեծապես պայմանա-

վորված է կորոնավիրուսային համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության, ինչպես նաեւ 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ երկրում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմներով նախատեսված սահմանափակումներով, որոնց պայմաններում բաղադրանքներն ավելի քիչ են բացակայել իրենց բնակարաններից:

2020թ. ընթացքում բացահայտվել է կոռուպցիոն հանցագործության 36 դեպք, ինչը 6-ով կամ 20%-ով ավելի է նախորդ տարվա համեմատ: Դրանով պայմանավորված՝ ավելացել է նաեւ հարուցված քրեական գործերի թիվը:

Սյունիքի մարզում գրանցվել է ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 55 դեպք, գրեթե նույնքան, որքան 2019 թ., սակայն մահվան ելքով պատահարներն ավելի են եղել 2-ով /17-15/:

Նկատի ունենալով պատերազմի հետևանքները հատկապես Սյունիքի մարզի տարածքում ճանապարհային հաղորդակցության ոլորտում՝ ՀՀ գլխավոր դատախազը հատկապես շեշտել է մարզկենտրոնի եւ հանրապետության մյուս տարածքների հետ ՀՀ հարավային բնակավայրերի տրանսպորտային հաղորդակցության, բնակիչների երթեւեկության անվտանգության ապահովման եւ հնարավոր պատահարները

նվազագույնի հասցնելու ուղղության իրավապահ մարմինների ջանքերի բազմապատկման անհրաժեշտությունը՝ հատկապես ոստիկանության պարեկային ծառայությունների, ճՈ-ի կողմից ճանապարհների երթեւեկության հսկողության ուժեղացման առումով:

Մարզի տարածքում 2020թ. արձանագրվել է գեւեքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի կտրուկ ավելացում 23-ով՝ կամ գրեթե 4.5 անգամ. 2019 թ. 5 նման դեպքի դիմաց 2020թ. արձանագրվել է 28 դեպք: Նման պատկերը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Սյունիքի մարզը եւ հատկապես Գորիս քաղաքը, պատերազմի ողջ ընթացքում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջեւ հաղորդակցության, լույսափոխության միջոց: Պատերազմի ընթացքում եւ դրանից հետո Արցախից ապօրինի կերպով գեւեք-զինամթերքը դեպի ՀՀ տարածք տեղափոխելու բազմաթիվ դեպքերը բացահայտվել են հենց մարզի հիմնական մայրուղիներում տեղակայված հսկիչ կետերի կողմից իրականացվող ստուգումների արդյունքում:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանձնարարել է 2021 թ. ընթացքում ինչպես անհրաժեշտ բացատրական աշխատանքների, այնպես էլ օպերատիվ-հետա-

Հարունակությունը՝ էջ 8



Սյունիքի մարզկենտրոնում մեկնարկեց Հայոց ազգային բանակի ձմեռային թարմացման գործընթացը

Սկիզբը՝ էջ 1

տարբերվում է նախորդ զորակոչների հաղթական տրամադրվածությունից, բան-գի բոլորի հոգում տիրում են թախիծն ու կսկիծը, նաեւ խոնարհումն ընկած տղաների սխրագործությունների առաջ: Բանախոսը համոզմունք հայտնեց, որ բանակ զորակոչվածները պատվով ու պատասխանատվությամբ կշարունակեն պատերազմի մասնակից ընկերների գործը՝ իրենց մտապատկերում ունենալով ավելի հզոր ու առնական բանակ ունենալու տեսլականը:

– Իրավունք չունենք թուլանալու եւ գլխիկոր լինելու, այլ պիտի հաղթահարենք դժվար

րին կացությունը եւ հաստատուն քայլերով առաջ գնանք, – իր խոսքն այսպես եզրափակեց Վահե Աղալարյանը:

Հայրենիքի ապագա պաշտպաններին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը, ՀՀ պաշտպանության նախարարության Կապանում տեղակայված գործառնական հրամանատար, ՀՀ ազգային հերոս, գնդապետ Գարեգին Պողոսյանը:

Բարեմաղթանքի խոսքերից հետո եղան պարզեցադրումներ: Արցախյան 44-օրյա պատերազմում ցուցաբերած խիզախության եւ արիության համար հանրա-

պետության ՀՈՒ գլխավոր շտաբի մարտական պատրաստության վարչության պետ, գեներալ-մայոր Վալերիկ Քոչարյանը շնորհակալագրեր հանձնեց Տիգրան Ղուկասյանին, Սենիկ Պապյանին, Ասատուր Առաքելյանին:

Օրինակի խոսքերի ներքո զինակոչիկները մեկնեցին հանրապետական հավաքակայան:

Կապանցի եւ քաջարանցի երիտասարդներին Հայոց ազգային բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողությանը մասնակցում էր Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեղրի համայնքի բնակիչների ջրի խնդիրը

Սկիզբը՝ էջ 1

րավ-արեւելյան լանջերից ու հետո միանում է Մեղրի մայր գետին: Ձնհալների շնորհիվ յուրաքանչյուր տարվա մոտ օգոստոս ամսից սկսած Չվարագետը դառնում է ջրառատ, որի շնորհիվ էլ մշտապես ապահովվել է խմելու եւ ոռոգման ջրի լիարժեք մատակարարումը Մեղրի համայնքի նշված բնակավայրերի համար: Առանց դրա Մեղրի գետն ապահովում է միայն յուրաքանչյուր տարվա սկզբից մինչեւ հունիս-հուլիս ամիսների ջրամատակարարումը ու հետո Մեղրի դառնում է խիստ սակավաջուր, իսկ Մեղրի քաղաքի հատվածում գետն առհասարակ ցամաքում է: Այս կերպ նաեւ լուրջ վնասներ են պատճառվել արդեն Մեղրի համայնքի շրջակա միջավայրին:

Բնակիչները եւ Մեղրի համայնքի ղեկավարը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել են, որ աղբյուրանական զինվորականները յուրաքանչյուր ամիս հատուկ ինժեներական տեխնիկայով արգելակներ են ստեղծում ու դրանով փոխում վտակի հունը դեպի Նախիջեւան:

Այսինքն՝ աղբյուրանական զինված ուժերի այս դիտավորյալ գործողությունների արդյունքում լուրջ խնդիրներ են առաջ գալիս յուրաքանչյուր տարի օգոստոս ամսից սկսած Մեղրի եւ Ագարակ քաղաքների, Նոնաձոր, Շվանիձոր, Ավանք գյուղերի բնակիչների համար՝ կապված՝ խմելու եւ ոռոգման ջրի հասանելիության հետ:

Ընդ որում՝ այս ամենն արվում է մարդկանց կյանքի համար իրական վտանգավոր ուժի սպառնալիքով, բանի որ Մեղրի գետի Չվարագետ վտակի առաջացման հատվածը գտնվում է աղբյուրանական զինվորականների ուղիղ նշանառության տակ ու հսկվում է Նրանց կողմից:

Աղբյուրանական զինված ուժերի ու որ Նույնն է՝ իշխանության մարմինների այս արարքներով կոպտորեն խախտվում է միջազգային բացարձակ արգելքներով երաշխավորված Հայաստանի Մեղրի համայնքի բնակիչների համար կենսական կարեւորություն ունեցող, այն է՝ ջրի իրավունքը:

Ջրի իրավունքը երաշխավորված է միջազգայնորեն: Այս իրավունքը ներառում է մարդու իրավունքն ունենալու բավարար եւ շարունակական ջուր թե՛ խմելու, թե՛ կենցաղային նպատակների (ոռոգման, հիգիենայի եւ այլն) համար: Ընդ որում՝ պետք է լինի ջրից օգտվելու անվտանգ հնարավորություն ու լիարժեք հասանելիություն: Այս իրավունքն ունի բացառիկ արժեք ու ընկած է մարդու կյանքի, առողջության պահպանման, արժանապատվության ու մասնավոր կյանքի եւ կենսական կարեւորության մյուս իրավունքների հիմքում:

Այս իրավունքն այնքան հիմնարար է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը ջրի եւ սանիտացիայի իրավունքը հռչակել է համաշխարհային կայուն զարգացման նպատակ՝ հաշվի առնելով ջրի հիմնարար, անփոխարինելի նշանակությունը մարդու զարգացման ու կյանքի կազմակերպման համար: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն այս իրավունքը բնորոշել է որպես հազարամյակի զարգացման նպատակ:

Աղբյուրանի զինված ուժերի նկարագրված արարքները կոպտորեն խախտում են նաեւ «Անդրսահմանային ջրահոսքերի եւ միջազգային լճերի օգտագործման եւ պահպանության» մասին 1992 թվականի մարտի 17-ին Յեյիսկիում ընդունված կոնվենցիան եւ այլ միջազգային փաստաթղթեր:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ներկայում ամփոփվում են Հայաստանի բնակիչների միջազգայնորեն բացարձակ երաշխավորված իրավունքը աղբյուրանական զինված ուժերի կողմից շարունակաբար լուրջորեն խախտելու առնչությամբ վերլուծություններն ու գնահատականները, որոնք կուղարկվեն միջազգային ու առաջին հերթին մասնագիտացված կառույցներին, ինչպես նաեւ ՀՀ իրավասու մարմիններին:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԻ ՊԱՇՏՊԱՆ
04.02.2021



Ավելի լավ է կանխել հիվանդությունը, քան՝ բուժել այն

Տիկին **Բեկնազարյան, սկսենք կենտրոնի առաքելությունից. ո՞րն է այն մեր տարածաշրջանում:**

– Կենտրոնն իրականացնում է ախտորոշիչ եւ բուժական միջոցառումների ծառայություններ՝ կապված սիրտանոթային համակարգի հիվանդությունների հետ: Այն կազմված է երկու կաթետերիզացիոն լաբորատորիաներից (ինվազիվ միջամտության սրահներից), հետազոտության եւ ախտորոշման սրահներից, ռենտգեն կաթինետից, լաբորատորիայից, ինչպես նաեւ վերակենդանացման բաժանմունքից ու շտապ օգնության համար հատկացված հատուկ ընդունելության սրահից:

Կենտրոնը համալրված է ժամանակակից բժշկական սարքավորումներով եւ տեխնիկայով:

ՀՀ-ում սահմանված պետպատվերի շրջանակում իրականացվող սիրտանոթային հիվանդությունների բուժման հետ կապված արտոնությունները գործում են նաեւ մեր կենտրոնում (կորոնարոգրաֆիա, բալունային անգիոպլաստիկա եւ ստենտավորում):

Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը կարեւորագույն առաքելություններից է համարում շարունակական կրթությունը, վերապատրաստումներն ու փորձի փոխանակումը Հայաստանում եւ արտերկրում: Դրանով է պայմանավորված այն բարի ավանդույթը, որ Ֆրանսիացի բազմաթիվ փորձառու սրտաբաններ ամենամյա այցեր են իրականացնում կենտրոն:

Ի թիվս այլ ծրագրերի՝ մեր կենտրոնը նախաձեռնել է շարունակելու է իրականացնել իր սրտաբանների գործադրումները Սյունիքի մարզի տարբեր համայնքներ՝ տեղի բժշկական անձնակազմի հետ բնակչությանը կանխարգելիչ եւ ախտորոշիչ միջոցառումներով ապահովելու համար:

– Տիկին Բեկնազարյան, Ձեզ է վստահվել Սյունիքի մարզի պատասխանատու ոլորտներից մեկը՝ սրտաբանական կենտրոնի տնօրինությունը:

Փառք ու պատիվ, իհարկե, Սյունիքի բուժօգնությունների անձնակազմերին, ովքեր պատերազմի ամիսներին տարբեր գործառնություններ են իրականացրել, գտնվել նաեւ պատերազմական գոտում, վիրավորներին անմիջական բուժօգնություն ցուցաբերել:

Ինչպիսի՞ն էր հիվանդանոցի գործունեությունը պատերազմական եւ հետպատերազմական շրջանում:

– Պատերազմի երկրորդ օրից սկսած կազմակերպել ենք զինվորի համար առաջին օգնության փաթեթներ՝ ցավազրկող դեղորայք, արյունը դադարեցնող ժգուտներ, ներարկիչներ, ախտահանիչ միջոցներ եւ այլն:

Երեք անգամ սրտաբանական կենտրոնն անհատական կարգի օգնություն է ուղարկել՝ շուրջ 800 փաթեթ:

Բացի այդ՝ ոչ անհատական օգնություններ ենք կազմակերպել. ուղարկել ենք արկղեր՝ դարձյալ բժշկական պարագաներ, հիմնականում՝ Ստեփանակերտի հիվանդանոցի համար:

Պատերազմի օրերին կամավոր Արցախ է մեկնել սրտաբանական կենտրոնի երկու բժիշկ՝ ամուսիններ, ինվազիվ սրտաբան Գեորգ Ամիրջանյանն ու սրտաբան Տաթևիկ Հայրապետյանը:

Ստեփանակերտի հիվանդանոցում նրանք 21 օր օգնություն են ցույց տվել վիրավորներին, սրտանոթային խնդիրներ ունեցող բաղաբաղիներին:

Նրանց հետ անմիջական կապի մեջ էինք, իրենք էին մեզ տեղեկացնում, թե տեղում ինչպիսի օգնության կարիք կա, օրինակ՝ շնչառական ապարատի, կամ՝ մոնիտորի, դեղորայքի եւ այլն, կենտրոնն իր հերթին արագ կազմակերպում է ուղարկում եր անհրաժեշտ օգնությունը:

Դեղամիջոցների եւ բժշկական սարքերի

օգնություն եր կազմակերպում եւ ուղարկում նաեւ կենտրոնի հիմնադիր պարոն Ավետիս Մատիկյանը՝ Հայաստան-Ֆրանսիա առողջապահական միավորման տնօրենը:

Պատերազմի ողջ ընթացքում ակտիվ համագործակցություն ենք ունեցել մարդպետարանի, Գորիսի համայնքապետարանի ու բժշկական կենտրոնի հետ: Բոլորիս նպատակը նույնն էր՝ օգնել ռազմաճակատին, զինվորին:

Սրտաբանական կենտրոնը պատրաստակամություն էր հայտնել՝ վիրավորներ ընդունելու, սակայն դրա կարիքը չի եղել:

Կենտրոնը՝ չնայած դրան, ամբողջովին պատրաստված էր վիրավորներ ընդունելու, ցուցաբերելու բոլոր տեսակի բուժօգնություններ:

Պարտաստված էինք նաեւ ամենավատ թար վիճակին անգամ՝ բունկերային սպասարկման:

Դրա փոխարեն մեր հարկի տակ առաջին օրերին ապաստան ենք տվել Արցախից տարահանված մի բանի ընտանիքի, կազմակերպել նրանց սնունդն ու բուժօգնությունը:

– Առայժմ երկու կարգ նշենք. որպես նեղ մասնագիտացված բուժկենտրոն, ինչպիսի՞ մոտեցման բաղաբանություն կա ձեզ մոտ՝ պատերազմի վետերանների եւ այս պատերազմի ժամանակ վիրավորվածների հանդեպ, արդյո՞ք այն հստակեցված է:

– Միանշանակ՝ հստակ է: Չինծառայողները, մարտական գործողությունների մասնակիցները՝ անկախ մասնակցության տարբերվից... Խոսքը վերաբերում է կորոնարոգրաֆիային եւ ստենտավորմանը, այսինքն՝այն, ինչն անմիջապես վերաբերում է կյանքին ու առողջությանը, բացարձակ անվճար է՝ պետպատվերի շրջանակում:

Բնականաբար, պահանջում ենք անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց ճշգրտությունը ստուգելուց հետո, ներկայացնում ենք պատկան մարմիններին:

Ինչ վերաբերում է չերեացող վերքերին. կան մարդիկ, ովքեր վերքեր են ստացել պատերազմի ժամանակ, որոնք արտաքինից չեն երեւում, բայց կարող են վտանգ լինել առողջության համար:

Պարոն Մատիկյանի՝ կենտրոնի հիմնադիրների հետ մենք խումբ ենք կազմել՝ ֆրանսահայ եւ ֆրանսիացի բժիշկների հետ՝ շուրջ հարյուր բժիշկ, ովքեր շուտով կայցելեն Հայաստան՝ ըստ մասնագետների (սրտաբաններ, հոգեբաններ, վիրաբույժներ) եւ բացարձակ անվճար օգնություն կցուցաբերեն պատերազմի մասնակից այս կարգի հիվանդներին, նաեւ՝ զոհվածի ընտանիքի անդամներին, պատերազմից տուժածներին, ովքեր կունենան հոգեբանական աջակցության կարիք:

Նրանք կառանձնացվեն ըստ խնդիրների, ըստ մասնագիտական բուժման կարիք ունեցողների:

Նորից անհրաժեշտություն կլինի տեղական իշխանությունների հետ համագործակցման:

Կարելի էր խումբը ստեղծվել է, պատրաստակամություն հայտնած մասնագետ բժիշկներ կան, շուտով կսկսվեն նրանց մասնագիտական այցերն ու չերեացող վերքեր ունեցող հիվանդների անվճար բուժումը:

– Տիկին Բեկնազարյան, Ձեր թույլտվությամբ հարցից փոքր-ինչ շեղվենք, ինչը դարձյալ հետաքրքրում է Սյունիքի բնակչությանը:

Սրտաբանական կենտրոնը ոչ վաղ անցյալում ունեցել է բավականին փորձառու սրտաբան բժիշկ՝ Կարեն Համբարձումյան:

Գաղտնիք չէ, որ նրան սիրում է վստահում եր հիվանդը:

Այսօր, երբ նա տեղափոխվել է Երեւան՝ մեկ այլ բուժօգնություն, գործիսեցուն, սյունեցուն առհասարակ, հետաքրքրում է՝ արդյո՞ք կենտրոնը հա-



ՍԱՅՏԵՐՆ

ԿԱՐԵՆ ՎԻԿՏՈՐԻ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1983 թվականին Իջեւանում: 2000 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 2004-ին՝ Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը:

2003-2004 թթ.՝ կիրառական տնտեսագիտության ուսուցչուհի (Իջեւանի թիվ 4 միջնակարգ դպրոց):

2005 թ.՝ մագիստրատուրայի առաջին տարվա պրակտիկա (ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարություն):

2006-2007 թթ.՝ «Շանթ» հեռուստաընկերության շուկայավարման եւ գովազդի մենեջեր, Երեւան:

2006թ.՝ մագիստրատուրայի ավարտական պրակտիկա (ՀՀ ֆինանսների նախարարություն):

2007-2008 թթ. սովորել է Ֆրանսիայի Կաեն քաղաքի Ձեռնարկությունների կառավարման ինստիտուտի օպերատիվ կառավարման ֆակուլտետում:

2008 - 2009 թթ., Grant Thornton կազմակերպության ֆրանս-հայկական ներդրումային ծրագրի ղեկավարի օգնական, Փարիզ, Ֆրանսիա:

2010-2012 թթ., Եվրոպական ուսումնական կենտրոնի ուսումնական խորհրդատու, Լիլ, Ֆրանսիա:

2014-2019թթ., Հերոյի վարչական շրջանի ադմինիստրատիվ բաժնում քաղաքացիության հայտերի ուսումնասիրման պատասխանատու, Մոնպելյե, Ֆրանսիա:

2019թ. սեպտեմբերից – 2020թ. հունիս՝ Ֆրանսիայի ներգաղթի եւ ինտեգրման Մոնպելյեի գրասենյակում (OFII) փախստականների հարցերով աուդիտոր, Ֆրանսիա:

2020 թվականի հուլիսից Գորիսի Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի տնօրենն է:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

մալրվել է լավագույն սրտաբան բժիշկներով:

Ի՞նչ կասեիք բուժանձնակազմի պատրաստվածության մասին:

Ցանկալի է լսել նաեւ ներկա բուժանձնակազմի, կենտրոնի գործունեության կազմակերպման ու կարգի մասին:

– Սկսեմ կենտրոնի բուժանձնակազմի, նրա գործունեության կազմակերպման կարգից. ունենք լավ պատրաստված, ինչ ու նոր հրաշալի բուժանձնակազմ. երկու ինվազիվ սրտաբան, երեք սրտաբան, մեկ ռեանիմատոլոգ :

Կենտրոնն ունի 40 աշխատակից՝ բժիշկներ, ինժեներներ, բուժքույրեր, լաբորանտներ, մայրապետեր, անվտանգության, ինչպես նաեւ ադմինիստրատիվ աշխատակիցներ:

Տնօրինությունը, բժիշկների հետ միասին, բուժքույրերի համար կազմակերպում է վերապատրաստման դասընթաց-քննարկումներ, ինչին հետեւում են պարբերական դարձած ներքին քննությունները:

Աշխատում ենք ամենօրյա ռեժիմով: Բժշկական հերթապահությունն իրականացվում է շաբաթվա բոլոր օրերին՝ 24-ժամյա ռեժիմով:

Ամեն օր առավոտյան ժամը 9-ին բժշկական թիմը եւ միմյանց փոխարինող հերթապահները միասին խորհակցություն են անցկացնում՝ հիվանդներին անհրաժեշտ բուժում եւ խնամք ցուցաբերելու համար:

Հաճախորդներին որակյալ եւ հետետեղական բժշկական ծառայություն մատուցելու նպատակով նրանց բժշկական գործերը պահպանվում են կենտրոնում:

Այժմ ինվազիվ սրտաբան Կարեն Համբարձումյանի մասին: Հճմ ժխտում, Կարեն Համբարձումյանը պատրաստված մասնագետ է, ոլորտում մասնագիտացված:

Նրա բարի համբավը միաժամանակ պայմանավորված էր նաեւ նրանով, որ բազմիցս վերապատրաստվել է Ֆրանսիայում՝ պարոն Մատիկյանի բարի ջանքերով:

Կարեն Համբարձումյանն աշխատանքից ազատվելուց՝ հեռացան նաեւ այլ մասնագետներ, ինչը կարող էր մի կարճ ժամանակ դժվարացնել բուժկենտրոնի գործունեությունը:

Բարեբախտաբար, դա տեղի չունեցավ, ինչպես ասում են՝ անփոխարինելի կադրեր չկան: Այսօր, ինչպես ասացի, կենտրոնը շատ արագ նոր մասնագետ կադրեր ներգրավեց աշխատանքի, մեկի փոխարեն համալրվեց երկու ինվազիվ մասնագետ բժիշկներով, որոնցից մեկի մասին ասացի՝ Գեորգ Ամիրջանյան, ով պատերազմի օրերին գտնվել է Ստեփանակերտի հիվանդանոցում:

Մյուս ինվազիվ սրտաբանը Գեորգ Հովսեփյանն է:

Նրանք երկուսն էլ մասնագիտացված են Մոսկվայում...

Ուղղակի ժամանակ է պետք, որպեսզի մարդիկ ճանաչեն, եւ, վստահ եմ, նրանք այդ ճանապարհին են:

Կոլեկտիվի մեծամասնությունը ինչ ու փորձառու կադրեր են, ովքեր մարդկային կյանքեր են փրկում եւ որակ ապահովում՝ կորոնարոգրաֆիայի եւ սուր ինֆարկտի մասնագիտացված ոլորտում:



Այդ ծառայությունները Սյունիքի մարզում կատարվում են միայն մեր կենտրոնում:

Ինչ վերաբերում է սրտի հիվանդությունների հետ կապված՝ կոնսուլտացիա, հետազոտություն, էխո-սրտագրում, բոլոր հիվանդանոցներում էլ դա կարող են կատարել:

Փառք աստծո, մինչ այս պահը որեւէ լուրջ բողոք կամ ահազանգ չի արձանագրվել:

Ի դեպ, մենք սպասարկում ենք ոչ միայն Սյունիքի մարզի բնակիչներին, մեր կենտրոն են դիմում նաեւ շրջակա մարզերից:

Քանի որ Ստեփանակերտի մասնաճյուղն այս պահին խնդիրներ ունի՝ բուժապասարկման հետ կապված, սպասարկում ենք նաեւ Արցախի բնակչությանը:

– **Պատերազմից հետո ինչպիսի՞ն է այսօր մարզի բնակչության առողջական վիճակը՝ սիրտ-անոթային խնդիրների ծավալի ու աճի առումով:**

– Քանի որ կարճ ժամանակ է, ինչ աշխատում եմ, համեմատել չեմ կարող, բայց կփորձեմ վեց ամսվա փոփոխությունները ներկայացնել:

Ամռան ամիսներին սրտանոթային հիվանդությունների աճ չի նկատվել, այն սրվեց վերջին ամիսներին: Թերեւս դա նաեւ պայմանավորված էր պատերազմով ու մեր կորուստներով:

Հիմնականում սրտանոթային խնդիրները ծագում են ձմռան ամիսներին՝ կապված անոթների նեղացման, գուցե նաեւ աշխարհագրական դիրքի հետ:

2020 թվականն առիաստրակ դժվար տարի էր բոլորիս համար, այդ ամենին ավելացավ նաեւ «բովիդի» համավարակը:

Կենտրոնը բնականաբար անցել էր ավելի խիստ ռեժիմի, պահպանում էինք համավարակով պայմանավորված բոլոր կանոնները, ինչը չէր կարող չազդել մեր աշխատանքի նորմալ կազմակերպմանը՝ սկսած հիվանդների այցից, ընդունումից՝մինչեւ նրանց սպասարկում եւ ճանապարհում:

Բոլոր դեպքերում բնակչությանը կոչ կանք՝ հետեւել իրենց առողջությանը, ժամանակին դիմել բժշկի, որպեսզի չխորանա խնդիրն ու դժվար չլինի բուժումը, չգրանցվեն անտեղի մահեր:

– **Ի դեպ, մահերի մասին, նախկինում էին դրանք թվային առումով շատ գրանցվում, թե՛ հիմա:**

Մարզի սրտանոթային խնդիր ունեցող հիվանդը կարո՞ղ է վստահաբար դիմել ոչ թե Երեւանի, այլ Գորիսի սրտաբանական կենտրոն՝ համոզված, որ այն հազեցած է արդիական բժշկական սարքավորումներով:

Արդյո՞ք նա չի գիշում Երեւանի՝ Նույն մասնագիտացված հիվանդանոցներին:

– Մահեր եղել են, հիմա էլ կան, ուղղակի թվերը պետք է ճշտել:

Սա այն ոլորտն է, որտեղ, ցավոք, անհնար է խուսափել մահերից:

Մեր խնդիրն է դրանք հնարավորինս կրճատել, պահպանել կենտրոնի բարի համբավը:

Ինչ վերաբերում է Երեւանին, թե Գորիս դիմելուն, կասեմ հետեւյալը:

Մեր առողջապահական հաստատությունների հիմնական թերացումը «ատկատով» աշխատելն է, հիվանդին ոչ թե մասնագիտացված տեղ ուղղորդելը, այլ՝ բոլորովին այլ հիվանդանոց, ինչն էլ հանգեցնում է մահերի թվի աճի:

Բացառությամբ սրտի բաց վիրահատությունից, մենք այստեղ իրականացնում ենք սրտանոթային բոլոր սպասարկումները՝ ստենտավորում, գրգռվորում, ախտորոշում, թերապեւտիկ բուժումներ եւ այլն:

Կենտրոնը ոչ միայն չի գիշում, նաեւ որոշ տեղեր գերազանցում է այլ հիվանդանոցների: Արդիականացված այնպիսի սարքավորումներ ունի, ինչպիսին Երեւանի լավագույն մասնագիտացված հիվանդանոցները:

Իհարկե, ընտրությունը հիվանդինն է, թե որտեղ կցանկանա բուժվել, բայց եթե Նույն որակի բուժումը կարելի է ստանալ Գորիսում, քո տանը եւ՝ ժամանակին, ինչու՞ չօգտվել այդ կենտրոնի սպասարկումից, որի հիմնադիրներն ամեն ինչ արել, այսօր էլ անում են, որպեսզի մեր բուժկենտրոնն ունենա բարձրորակ տեխնոլոգիայի լավագույն հագեցվածություն, նախավիրահատական եւ հետավիրահատական դեղամիջոցներ՝ ֆրանսիական ու եվրոպական:

– **Ի՞նչ կասե՞ք տեղադրվող ստենտ-**



ների մասին:

Հազար ներողություն, Նույնիսկ տարաբնույթ գրույցներ կային, թե իբր դրանք երբեմն անորակ չինականներն են, կամ, որ ավելի վատ է՝ տեղադրում են արդեն մեկ անգամ օգտագործածը:

– Սկսեմ նրանից, որ մեկ անգամ տեղադրածը երբեք հնարավոր չէ նորից օգտագործել, դա բացառվում է: Սրտաբան բժիշկ պետք է լինել՝ դա հասկանալու համար: Դա ծիծաղելի սուտ է:

Անոթի մեջ մտնող ստենտը, որը բացվել է, այլեւս տեխնիկապես հնարավոր չէ այն դուրս հանել եւ տեղադրել մեկ այլ հիվանդի անոթում:

Կան տարբեր երկրների արտադրության ստենտներ. ամերիկյան, ճապոնական, հնդկական, չինական...

Կենտրոնը բացառապես օգտագործում է ճապոնական եւ ամերիկյան բարձրորակ ստենտներ:

– **Բոլորս գիտե՞նք, որ այսօր բժշկությունը մեծ քայլերով առաջ է ընթանում, եւ ոչ բոլոր բուժաստատություններին է հաջողվում հասնել նրա հետեւից:**

Վերջին շրջանում կենտրոնն ինչպիսի՞ տեխնիկական վերագինում է ունեցել:

– Վեց ամսվա կտրվածքով, ինչ այստեղ եմ, նորագույն տեխնոլոգիա չենք կիրառել, եղածը լիովին դեռ բավարարում է:

Սակայն կատարվել են մի շարք ծրագրային փոփոխություններ: Իսկ դա նշանակում է, որ վերջին ծրագրերը մենք կարող ենք ամրագրել մեզ մոտ՝ առանց սարքը փոխելու:

Սա էլ է համարվում նորամուծություն, բարելավում՝ շատ ավելի արդյունավետ ու արագ:

Առաջիկա ամիսներին մեր բարեգործներից սպասում ենք նոր տեխնոլոգիաներ, ինչը կթարմացնի տեխնիկական բազան:

– **Կա՞ն դրսից հրավիրվող մասնագետներ, ովքեր այստեղ անձնակազմի հետ մասնագիտական վերապատրաստումներ են անցկացնում:**

– Հիմնականում հրավիրվող մասնագետները Ֆրանսիայից են, պարոն Մատիկյանն ինքն է նախաձեռնում մեր պահանջարկին համապատասխան:

Կարելի է ասել, անընդիստ կապի ու խորհրդատվության մեջ ենք ֆրանսիացի մեր գործընկեր սրտաբանների հետ, ինչը եւս նպաստում է կենտրոնի բարձրորակ աշխատանքներ իրականացնելուն:

– **Ելնելով մեր ազգաբնակչության օցիդալական վիճակից՝ շատերին կհետաքրքրի այս հարցը. ինչպիսի՞ն է ձեր կենտրոնում գործող գնային քաղաքականությունը, կա՞ փոփոխություն, թե՞ ամեն ինչ մնացել է նույնը:**

– Պետպատվերի մեջ մտնող վիրահատությունների համար տվյալ հիվանդանոցին, բնականաբար, պետությունն է փոխհատուցում:

Գնային փոփոխություններ չեն կատարվել, նույնն է, ինչ՝ նախկինում:

Պետպատվերի շրջանակներում մեկ դեղապատ ստենտով ստենտավորման գինն անփոփոխ է բոլոր մասնագիտացված բուժ-

հաստատություններում՝ սկսած 750.000 դրամից եւ ավելի:

Ինչ վերաբերում է վճարովի ծառայություններին... Եթե հիվանդը չի մտնում պետպատվերի չափանիշների մեջ, ապա ինքը կամ իր ընտանիքն է վճարում:

Այդ մասին խոսում ենք միայն վիրահատելուց, հիվանդին սպասարկելուց հետո:

Կախված հիվանդի վիճակից՝ ստենտավորումից հետո հիվանդը երեք-չորս օր մնում է մեր հսկողության տակ՝ անմիջական բուժումների մեջ:

Այնպես չէ, որ չվճարելու դեպքում վիրահատություն չի կատարվում, առաջին նպատակը հիվանդին օգնելն է, դուրս հանելն այդ վիճակից, նրա կյանքը փրկելը:

Այդ բարի ավանդույթը կար, հիմա էլ պահպանվում է:

Նորից կուզեի նշել, որ հայ-ֆրանսիական մեր համագործակցությունը շատ դրական կողմեր ունի, դրանցից մեկն էլ հիվանդին առաջնահերթ բուժելն է, ապա միայն՝ ֆինանսական ծախսերի մասին խոսելը: Կարող են կիրառվել գեղջեր, կարող է լինել պայմանավորվածություն՝ մի քանի ամսվա ընթացքում վճարելու:

Ամեն ինչ շատ ավելի մարդկային վրա է հիմնված, քան Երեւանի որեւէ այլ հիվանդանոցում:

Մշտապես մտնել հիվանդի, նրա հարազատների դրության մեջ. դա է մեր կենտրոնի բաղաբանականությունը:

– **Տարածված խոսակցություն կա, թե առողջապահության (այլեւս նախկին) նախարար Արսեն Թորոսյանը փորձում էր այս կենտրոնի գործունեությանը խոչընդոտել՝ պետպատվերների հետ կապված հարցերում:**

Որքանո՞վ է դա հիմնավոր:

– Այդպիսի բան չկա, մեր կողմից ներկայացվող բոլոր պետպատվերներն ընդունվում եւ հաստատվում են:

Նախկինում իրավիճակն այլ էր, կարող էր, ասենք, տարվա վերջին տվյալ հիվանդանոցին հատկացված գումարի լիմիտը սպառվել, հիմա՝ այլ է, գումար է տրամադրվում նաեւ տարեվերջին, եթե դրա անհրաժեշտությունը կա:

Այսինքն՝ այդ համակարգն ավելի ճկուն է գործում, միայն թե հիվանդն իրոք պետպատվերի չափանիշներին լիարժեք համապատասխանի:

– **Ի՞նչ կասե՞ք կենտրոնում տարվող բժշկական վճարովի խորհրդատվության, հետազոտության մասին:**

Եթե կարելի է, մանրամասն ներկայացրե՞ք. ինչպե՞ս է այն ընթանում, նաեւ ժամային պատկերը:

– Խորհրդատվության համար անհրաժեշտ է նախապես զանգահարել եւ հերթագրվել երկուշաբթի- ուրբաթ՝ 09:00-17:00 ժամերին:

Հետազոտության համար կարգը հետեւյալն է. ընդունարանում ադմինիստրատիվ հարցերը լուծելուց հետո հիվանդը բուժքրոջ կողմից ուղեկցվում է բժշկի մոտ՝ հետազոտվելու:

Հետազոտվելուց հետո կատարվում է ախտորոշում, որի հիման վրա, ելնելով պացիենտի առողջական վիճակից, կամ

առաջարկվում է դեղորայքային բուժում կամ ծրագրվում է երկրորդ հետազոտություն կամ էլ առաջարկվում է ինվազիվ միջամտություն:

Հետազոտության արդյունքում ինվազիվ միջամտության, ինչպես նաեւ շտապ դեպքերի ժամանակ հիվանդի կամ հարազատների հետ պայմանագիր է կնքվում, որին կցվում է նախնական նախահաշիվ:

Պարտադիր այն համաձայնեցվում է հիվանդի կամ նրա հարազատների հետ: Իսկ հետազոտության ամբողջ տվյալները թվայնացվում եւ CD կրիչի ձեւով փոխանցվում են հիվանդին:

Այսբանը՝ որպես տեղեկություն, իսկ ավելի խորքային, կասեմ, որ կենտրոնի սրտաբան Տաթևիկ Հայրապետյանը կոնսուլտանտ բժիշկ է, նա է իրականացնում բոլոր կարգի խորհրդատվությունները:

Ի դեպ, նա արդեն բավականին լավ արդյունքներ ունի խորհրդատվության հետ կապված:

Նրա հետ առնչված հիվանդները կվկայեն, որ ստանում են գրագետ եւ մասնագիտական ցուցումներ, բոլորն էլ գոհ են:

Պատերազմի մասնակից, նրանից տուժած անձանց հետ խորհրդատվությունը Նույնպես անվճար է անցկացվում:

Եթե տուժած չէ, բայց հիվանդը ֆինանսական խնդիր ունի, դիմել է կենտրոն, էլի փորձում ենք ինչ-որ կերպ աջակցել:

Ավելի լավ է մարդուն ասել իր խնդրի մասին, քան իետո գործ ունենալ նրա բարդացած վիճակի հետ:

– **Տիկին Բեկնազարյան, Արցախում, ցավոք, փրկվել են շատ կառույցներ, ենթակառույցներ, այդ թվում եւ՝ առողջապահական:**

Սյունիքի առողջապահական անելիքները մեծացել են՝ կապված արցախցիների բժշկական սպասարկման հետ, բնականաբար, ձեր կենտրոնն էլ գերծ չէ նրանց սպասարկման անելիքներից...

– Այդ, այսօր Արցախից էլ մեծ հոսք ունենք մեր կենտրոն, ամեն հնարավորն անում ենք, որպեսզի սպասարկենք նաեւ նրանց:

– **Ո՞րն է Սյունիքում ամենատարածված հիվանդությունը, ինչը նկատել էք պաշտոնավարման այս կարճ ժամանակամիջոցում:**

– Կարծում եմ՝ ոչ միայն Սյունիքում, այլեւ Հայաստանում այս պահին ավելի տարածված են սրտամկանային եւ ուռուցքային հիվանդությունները, այնուհետ՝ հիպերտոնիկ հիվանդությունները եւ շաքարային դիաբետը:

Բայց ասեմ, որ սրտանոթային հիվանդություններով, ինֆարկտով հիվանդին առանձնապես, պետք է շատ կարճ ժամանակում հասցնել սրտաբանական կենտրոն, ինչը բարեբախտաբար մոտ է. եւ մեկ րոպեն էլ կարող է ճակատագրական լինել նրա համար:

Երբեմն կարող է մեզ մոտ բերեն նաեւ ինսուլտով հիվանդին, ինչով կենտրոնը չի զբաղվում, բայց էլի անմիջապես օգնություն ենք ցուցաբերում, անհրաժեշտության դեպքում ահազանգում Երեւան՝ համապատասխան հիվանդանոց, իրավիրում մասնագետ, կամ՝ ուղղաթիռով ուղարկում հիվանդին:

– **Ի՞նչ եք կարծում, սրտանոթային հիվանդություններն աճե՞լ են վերջին տարիների համեմատ, թե՞ նվազում է նկատվում:**

– Կասե՞ի՝ նույնն է մնացել, ոչ շատացել են, ոչ էլ՝ պակասել:

Միայն մի նորություն դիտարկեմ. մարդիկ, ասես, շատ ավելի անտարբեր են դարձել իրենց առողջության նկատմամբ, ժամանակին չեն դիմում բուժաստատություններ, ինչն ավելի արդյունավետ բուժում կտա, նաեւ՝ քիչ ծախս կպահանջի, հետազայում չեն կանգնի բարդացված խնդրի առջեւ, ինչը միշտ չէ բուժելի ու ավելի ծախսատար է:

Գուցե դա մեր բնույթն է, չգիտեմ: Դանակը չպետք է թողնել, որ հասնի ոսկորին:

– **Ի՞նչ կմաղթի սրտաբանական կենտրոնի տնօրենը՝ Սյունիքի բնակչությանը, առիաստրակ՝ բոլորին:**

– Չբաղվել սպորտով, մաքուր օդում շատ լինել, չհարաշահել ծխախոտը, ալկոհոլը, ինչպես նաեւ՝ տարին գոնե մեկ անգամ ընդհանուր բուժակնություն անցնել, հետեւել օրգանիզմի ահազանգերին, որոնք կարող են հուշել առողջական լուրջ խնդրի մասին:

Ավելի լավ է կանխել հիվանդությունը, քան բուժել այն:

ՀԱՌՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Հավերժ փառք Արցախյան պետերագմում Նահատակված հայոց քաջորդիներին

Կարմիր-կարմիր ծաղիկներ 2020-ի սրբազան զոհերին

Ո՞ր կորան 2000-ի, 2001-ի, 2002-ի
ծաղիկներս, փնտրում, փնտրում չեմ
գտնում...

Ցուրտ է, ձմեռ է, գուցե լավ չեն ծածկվել,
հանկարծ չմրսեն: Գարունը հեռվում է:
Հենց եկավ՝ նրանք հարություն են առնելու,
գալու են՝ որպես հեքիաթային ծաղիկներ՝
հազարաբույր, հազարերանգ ծաղիկներ:
Կարմիր-կարմիր են լինելու այս տարվա
բոլոր ծաղիկները՝ անգամ մանուշակը,
սպիտակաթույր շուշանը:

Ողջ աշխարհը կարմիր սեւասիրտ
կակաչներով է ներկվելու, բար ու
քարափներից էլ միայն կարմիր է կաթելու:
Ի՞նչ եմ ասում, հիմա էլ ամբողջը կարմիր
է, անգամ ձյունն է կարմիր: Ի՞նչ նման
հազարները, միլիոններն այդ լեռի կարմիրն
են շնչում ու անդադար աղոթում:
Ծանր երկունքով է գալու այս գարունը:
Տափել հունդերս տնքոցով են պայթելու,
մատաղ ծիլերը ճեղքելու են մայր հողի
կուրծքը եւ դառնան երկներանգ ծաղիկներ:
Ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ... Այս
տարվա բոլոր ծաղիկները կարմիր են
լինելու, կարմիր-կարմիր, եւ անչափ առատ:
Քարերն ու քարափները, գետերն ու ծովերն
էլ կարմիր են ներկվելու, կարմիր են շնչելու:
Աշունս արևաներկվեց, արևաներկվեց նեղի
հրավերով, չարի ձեռամբ: Աշխարհի չարերի:
Այս գարնան բոլոր ծաղիկները կարմիր-
կարմիր են լինելու: Նրանց բուրմունքն էլ
կարմիր է տենչալու:

Իմացե՛ք նաեւ, այդ հեքիաթային ծաղիկներն
ավետելու են մեր ցյուրավոր Կահազների
բարի ծնունդը եւ զարդարելու են հայ մոր
սրբազան կուրծքը:


Ուրիշ են լինելու այս գարնան ծաղիկները,
ուրիշ, շատ ուրիշ: Կյանքի ծաղիկներ են
լինելու: Այս ծաղիկներից է կազմվելու հայ
ապագայի փունջը, հզոր ու հաղթական
փունջը:

Չկասկածե՛ք, դրանք անմոռաց ծաղիկներ
են, հրաշագործ ծաղիկներ:

Դե՛, շու՛տ բացվիր անմար հույսերի-
խիզախությունների գարուն, Հայոց
քաջազունների գարուն...

**ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Զ. ԳՈՐԻՍ**

Տիրան Պետրոսյան



Ծնվել է Մոսկվա քաղաքում, 2000
թվականի հոկտեմբերի 10-ին, երբ
ընտանիքը կարճ ժամանակով մեկ-
նել էր Ռուսաստանի Դաշնություն՝ արտագնա
աշխատանքի:

2001 թվականից ընտանիքը բնակություն
է հաստատել Կապանում, եւ Տիրանի մանկու-
թյունը, պատանեկությունն ու ամբողջ կյանքն
անցել են հայրենի եզերքում:

2017 թ. ավարտել է Աճանակի միջնակարգ
դպրոցը եւ Նույն թվականին ընդունվել
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ
սպորտի պետական ինստիտուտ:

Իր հայրենակներ ծնողների կողմից Տիրա-
նը ստացել էր ամուր ազգային դաստիարա-
կություն, հայրենասեր էր՝ իր ինքնությունը, իր
տեսակը հարգող, սիրող եւ այդ ինքնությունը,
հայրենիքի, իր եւ իր նմանների համար
անխնայ պայքարող հայորդի: Ազգային եկեղե-
ցու՝ Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ
էր, աստվածասեր, խոնարհ: Երբ հասունացել
եւ չարն ու բարին արդեն լիարժեք կերպով
գիտակցող մարդ էր դարձել, իր անձնական
նախաձեռնությամբ մկրտվել էր հայրենի
Քաջարանց գյուղի Սուրբ Հակոբե եկեղեցում՝
2018 թվականի օգոստոսի 1-ին: Չինվորական
ծառայության ընթացքում Տիրանը հասցրել
էր նաեւ իր ձեռքով մի գեղեցիկ մատուռ
կառուցել՝ Արցախի պաշտպանական գծի
դիրքերից մեկում:

Տիրանը շատ էր սիրում ֆուտբոլը: Յոթ
տարեկանից հաճախել է «Գանձասար» (այ-
նուի հետեւ՝ «Գանձասար-Կապան») ֆուտ-
բոլային ակումբ: Ակումբի լավագույն ֆուտ-
բոլիստներից էր, խաղացել է 1-ին լիգայում,
դարձել բազմաթիվ գոլերի հեղինակ: Մտադիր
էր բարձրագույն կրթություն ստանալուց
հետո ամբողջությամբ նվիրվել ֆուտբոլին եւ
գնալ դեպի մեծ ֆուտբոլ:

2019 թվականի հունվարի 13-ին գո-
րակոչվել է Հայաստանի զինված ուժերում
ծառայության: Ծառայությունն ամբողջու-
թյամբ անց է կացրել Արցախի Հանրա-
պետության Տրականի (Ցաքայի) զորա-
մասում: Շաբաթներից դարձել է կրտսեր
սերժանտ, հետո՝ սերժանտ: Հրամանա-
տարությունը պատրաստվում էր նրան
շնորհել ավագ սերժանտի կոչում: Տիրանը
ծառայության ընթացքում Նույնպես
զբաղվում էր ֆուտբոլով, քանի որ բանակում
խրախուսվում էր սպորտը, նա ծառայակից
ընկերների հետ միասին մասնակցում էր իր
զորամաս, ինչպես եւ այլ զորամասերի միջեւ
տեղի ունեցող ֆուտբոլային ընկերական
խաղերին, մրցաշարերին:

2021 թվականի հունվարի 13-ին Տիրանը
պիտի զորացրվեր եւ գնար իր խաղաղ ու
բարի երազանքներն իրագործելու, բայց...

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկս-
վեց Արցախյան երրորդ պատերազմը: Պատե-
րազմի հենց առաջին րոպեներից Տիրանն
արդեն պայքարի մեջ էր, քանի որ մարտական
դիրքում էր, եւ իր հերթապահությունն այդ
դիրքում դեռ չէր ավարտել: Տիրանը նաեւ
դիրքի ավագն էր:

Այդ դիրքերից 2020 թվականի սեպտեմ-
բերի 27-ին սկսվեց Տիրանի եւ իր մարտական
ընկերների անմաքուր պայքար-նվիրումը՝
հանուն Հայրենի հողի պաշտպանության:

2020 թվականի Արցախյան պատերազմին
Տիրանը մասնակցեց 33 օր՝ 2020 թվականի

Նիկայան Արմեն. հանուն հայրենիքի չինայեց կյանքը



«**Էս հորմեն ամեն մեկի բանը չէ,
ֆորմեն հազար՝ երկրի տերը
դու ես**», – սիրում էր կրկնել
Արմենը, ով 2009 թվականից պայմանագրային
զինծառայող էր Սիսիանի զորամասում ու
հայրենի Սյունիքի պաշտպանում:

Ծառայակիցներից երկու-երեք տարի էր
մեծ, բայց ծանր հանձնարարություններն
ինքն էր կատարում, որ «Էրեմեբեք» դժվարու-
թյուն չունենա:

Արմեն Սամվելի Նիկայանը ծնվել է
1981թ. փետրվարի 9-ին Սիսիանի շրջանի
Ծղուկ գյուղում: Սովորել է Ծղուկի միջնակարգ
դպրոցում, ամուսնացել է Ծղուկում: Ձերմ

սիրով էր սիրում իր գյուղը, աշխատանքի
պատճառով տեղափոխվել էին Սիսիան
քաղաք, բայց չէր կտրվել հայրենի գյուղից,
երեք զավակի մեջ էլ ամեն խոսքում սեր էր
դաստիարակում իրենց հայրենի գյուղի ու
բնության հանդեպ:

«Սովորեք, անընդհատ սովորեք», հոր-
դորում էր ընկերներին. ինքը պրպտուն միտք
ունեւ, դիրքում էլեկտրական հոսանք չկար
ու Արմենն ամեն օր մի հնար էր գտնում
հոսանք ստանալու: Դիրքապահ ընկերները
հպարտանում էին՝ «Մենք ակույս չենք
մա՛» Ծղուկի ֆիզիկոսը մեզ հետ է»: Արմենի
մասին խոսելիս՝ մի հատկություն են շեշտում՝
սերը հողի հանդեպ. «Ախր շատ էր ասում,
որ երկիրդ կյանքից շատ պիտի սիրես,
որովհետեւ մի օր հող ես դառնալու, այն հողը,
որ թոռներդ պիտի սիրեն»:

Թոռներին չի տեսնի, բայց երեք զավակի
սրտերում հասցրել է սերմանել անափ սեր
դեպի հայրենի հողը, որի համար չինայեց
կյանքը:

Արմեն Նիկայանը Նահատակվեց 2020թ.
հոկտեմբերի 10-ին՝ Տրականում. վերջին
ժամերին Նամակ էր գրել կնոջն ու խնդրել լավ
նայել իրենց փոքր դստերը, եթե հանկարծ
չվերադառնա...

ՏԻԳՐԱՆՈՒԴԻ ԲԱՂԱՆՅԱՆ

Կարեն Ղարիբյան. գիտակցված մահն անմահությունն է



մեկնելուց ասաց քրոջը:

Երեկոյան արդեն զինկոմիսարիատում էր:
28-ի առավոտյան խնդրում է իրեն անհապաղ
ուղարկել առաջնագիծ եւ բոլոր պնդումներին
ի պատասխան անընդհատ կրկնում է՝
«Գիտեմ ու գիտակցում եմ, որ հնարավոր
է հետ չգամ, բայց համոզված եմ, որ իմ կարիքը
կա»:

Կամավոր մեկնում է այդ օրերի ամենաթեժ
կետերից մեկը՝ Տրական (Ցաքայի):
Հնարավորության դեպքում զանգահարում
էր քրոջը՝ զինվոր որդու մասին մի բան
իմանալու: Ինքն ամուսնացած չէր, երեխաներ
չունեւ, բայց հայրաբար էր վարվում իր կողքի
կռվող ժամկետայինների հետ, փորձում ամեն
կերպ խնայել նրանց:

Հոկտեմբերի 10-ն էր. հարվածային
անօդաչուները կարկուտի պես կրակ էին
թափում երկնքից, Կարենը զանգահարեց
տանեցիներին՝ խնդրեց ուշադիր լինել ու
երջանիկ ապրել, բույրը եղբոր ծայրի մեջ
նախազգուշացնող մի երանգ զգաց, հուզվեց,
խնդրեց գոնե մի քանի օրով տուն գալ, բայց...

Երեկոյան լսեցին բոլոր՝ Կարենն ընկել է
թշնամական արկի հարվածից:

Գիտակցված մահով հերոսացած Կարենը
հողին հանձնվեց Քաջարանի պանթեոնում:

ՏԻԳՐԱՆՈՒԴԻ ԲԱՂԱՆՅԱՆ

սեպտեմբերի 27-ից մինչեւ 2020 թվականի
հոկտեմբերի 29-ը: Այդ ընթացքում Տիրանին
եւ իր ծառայակից ընկերներին հաջողվեց
պատվով կատարել մի շարք մարտական
առաջադրանքներ: Դաժան էր պատերազմը,
անհավասար էին ռեսուրսները: Հայկական
ուժերն առանձին հատվածներում սկսեցին
նահանջել, եւ ճակատագիրը Տիրանին ու
Տրականի զորամասի կենդանի մնացած
մյուս զինվորներին բերեց Արցախի
Հանրապետության Մարտունու շրջանի Քերթ
գյուղ: Այստեղ՝ 2020 թվականի հոկտեմբերի
28-ի լույս 29-ի գիշերը տղերքը մոբիլիզացնում
էին ուժերը եւ պատրաստվում հերթական
մարտական առաջադրանքը կատարելու, երբ
դարանակալ անօդաչու սարքը հարվածեց
մեր ուժերին: Հենց այդ ժամանակ էլ Տիրանը
եւ նրա մարտական ընկերները զոհվեցին:

Տիրան Պետրոսյանը զոհվեց 2020

թվականի հոկտեմբերի 29-ի գիշերը՝ Ար-
ցախի Հանրապետության Մարտունու շր-
ջանի Քերթ գյուղում՝ մարտական խոր առա-
ջադրանքի մեկնելիս՝ իր ողբերգական մահից
հետո այդպես էլ չթողնելով զավակներ եւ
հետնորդներ, որովհետեւ ընդամենը 20
տարեկան էր ու դեռ չէր հասցրել ամուս-
նանալ: Տիրանի եւ նրա կողքին զոհված 15
մարտական ընկերների մարմինները մահա-
ցու վերքերից անձանաչելի էին դարձել, եւ
Տիրանի մահվանից հետո 38-րդ օրը՝ 2020
թվականի դեկտեմբերի 6-ին, հնարավոր
եղավ ԴՆԹ թեսթի միջոցով գտնել նրա մար-
մինը:

Տիրանի մարմինն ամփոփված է Կապան
քաղաքի Բաղաբուրդի հուշահամալիրում Ար-
ցախյան բոլոր ազատամարտերում Նահա-
տակված կապանցի տղաների կողքին:

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ





ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «Ավադ, պատմական արժեքների միայն մեկ-երկու տոկոսը հնարավոր եղավ փրկել»

Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում մնացած հազարավոր սրբությունների ճակատագիրը շարունակում է մնալ «Սյունյաց երկրի» ուշադրության կենտրոնում:

Այդ նպատակով էլ գրուցեցինք խնդրո առարկային քաջատեղյակ Արա Վարդանյանի հետ, ով 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո մեծ աշխատանք է կատարել մեր ազգային-քրիստոնեական սրբությունները գոնե մասամբ փրկելու գործում:

Գորիսի գավակ Արա Վարդանյանը ծնվել է 1975 թվականին, ավարտել է ճարտարապետության եւ շինարարության Ֆայաստանի ազգային համալսարանը: 2003 թվականից դասավանդում է իր անվան համալսարանում: 2013 թվականից Մայր աթոռի գլխավոր ճարտարապետն է: Նաեւ գործունեություն է ծավալում մասնավոր նախագծման ասպարեզում:

ճարտարապետության թեկնածու է, ղոցենտ:

– **Պարոն Վարդանյան, նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրից հետո հայ ժողովրդին մտահոգող գլխավոր հարցերից մեկը եղել ու մնում է պատմամշակութային ժառանգության փրկությունը, որ մնացել է Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում: Մեր ունեցած տեղեկություններով՝ Դուք եւ Ձեզ հետ մի խումբ մարդիկ մտահոգ եք եղել այդ խնդրով ու բավականին աշխատանք եք կատարել մասնավորապես Ծիծեռնավանքում, Դահլիճում ...**

– Իրոք, նոյեմբերի 9-ի համաձայնագրից հետո խնդիր առաջացավ պատմամշակութային հուշարձանների հնարավոր փրկության եւ տեղափոխման առումով: Մայր Աթոռը բավականին մտահոգ էր այդ խնդրով: Անմիջապես սկսեցինք կազմակերպել փրկության գործը եւ նոյեմբերի 12-ին պատրաստ էինք մեծ թիմով գործի անցնել: Բազմաթիվ կազմակերպություններ ու անհատներ իրենց աջակցությունը հայտնեցին եւ լուծեցին տրանսպորտի, հատուկ տեխնիկական միջոցների, նյութերի եւ մարդկային ուժի հա-



մալրման հարցերը՝ տեղափոխման կամ էվակուացիայի խնդիրները լուծելու համար:

Տարածքներում, որոնք անցան Ադրբեջանի վերահսկողության ներքո, ունենք 10-12 հազար հուշարձան, որից շատ փոքր մասը հնարավոր եղավ տեղափոխել Ֆայաստան:

Տեղափոխման աշխատանքներ էին կատարում նաեւ ԿԳՄՍ նախարարության մշակույթի ոլորտի պատասխանատուները՝ ճարտարապետության եւ շինարարության Ֆայաստանի ազգային համալսարանի ու այլ կազմակերպությունների աջակցությամբ:

Մենք էվակուացիան սկսեցինք Դահլիճից: 14-րդ դարի հայտնի ասեղնագործ երկու հրաշալի խաչքարերն ու մնացած բոլոր խաչքարերը, որոնք ագուցված էին պատերի մեջ, տեղափոխեցինք Մայր Աթոռ:

Հաջորդ այցելությունն էլի Քարվաճառի շրջանի տարբեր գյուղերն էր, որտեղից նույնպես հավաքեցինք խաչքարեր, խաչքարերի բեկորներ: Ամենակարեւորը Ծար գյուղն էր, որ ժամանակին եղել է իշխանանիստ գյուղաքաղաք, որտեղ մինչեւ 18-րդ դարն ապրել են հայեր: Ծարում եղել է չորս վանք, որոնցից կիսավեր մնացել է միայն երկուսը: Ծարում հայերից հետո բնակվել են քրդեր, այնուհետեւ՝ ադրբեջանցիներ: Եվ վերջին 200 տարվա ընթացքում հասցրել են ոչնչացնել բավականին մշակութային արժեքներ, մասնավորապես խաչքարերը ջարդել եւ

Մենք էվակուացիան սկսեցինք Դահլիճից: 14-րդ դարի հայտնի ասեղնագործ երկու հրաշալի խաչքարերն ու մնացած բոլոր խաչքարերը, որոնք ագուցված էին պատերի մեջ, տեղափոխեցինք Մայր Աթոռ:

որպես շինանյութ շարել են գյուղական դպրոցի պատերում: Այդ բեկորները տարբեր աջակիցների միջոցով տեղափոխվել են Երեւան:

Մինչեւ նոյեմբերի 23-24-ը ինչ որ հնարավոր էր տեղափոխել, տեղափոխել ենք, իհարկե, բազմապատիկ անգամ ավելի արժեքներ մնացին, քանի որ անհնար էր այդ ամենը տեղափոխել ժամանակի, տեխնիկական միջոցների սակավության ու դժվարամատչելիության պատճառով: Ճանապարհները սկսել էին փակվել ու պայթեցնել՝ ռազմավարական նկատառումներից ելնելով, եւ տեղափոխության հնարավորությունները սահմանափակվեցին...

Հաջորդ այցելությունը Քաշաթաղի շրջանն էր՝ Ծիծեռնավանք, հետո՝ Հոջա ձորի գյուղերը՝ Սոնասար, Հոջան, Սպիտակաջուր, Անի, որտեղ բազմաթիվ այլ հուշարձաններից բացի գտնվում է 4-5-րդ դարերի հայտնի Կաթոսավանքը: Կաթոսավանքից, անկախ մեզից, տղաները սկսել էին տեղափոխել, բերել Գորիս, այդտեղից՝ Երեւան: Մինչեւ ամսի 27-28-ն ավարտեցինք նաեւ որմնակարների տեղափոխման հարցը՝ մեր մասնագետների միջոցով, Ծիծեռնավանքից եւ Դահլիճից...

– **Մեզ համար նորությունն էր, որ որմնակարներ եք հանել եւ տեղափոխել. ինչպե՞ս է դա հնարավոր: Երեւի նաեւ ինքեցրողներ շատերը չգիտեն՝ ի՞նչ ասել է՝ որմնակարները հանել եւ տեղափոխել:**

– Նախ ասեմ, որ Դահլիճում մեր լավագույն որմնակարներից մեկն էր գտնվում, եւ այն թողնել բախտի բնահաճույքին, չէր կարելի: Որմնակարները հանելու եւ տեղափոխելու տեխնոլոգիան կիրառվում է ամբողջ աշխարհում, մասնավորապես Իտալիայում:

Այդ տեխնոլոգիան կիրառվել է Միւսասի հայտնի որմնակարը Գյումրիից «Չվարթ-նոց» օդանավակայան տեղափոխելու ժամանակ: Նույն տեխնոլոգիայով Մայր տաճարի որմնակարներն են հանվել՝ ամրացման եւ վերականգնողական աշխատանքների համար: Հանելուց հետո մասնագետներն արվեստանոցում վերականգնում են, եւ նորից պիտի վերատեղադրվեն:

Նույն տեխնոլոգիայով հանվել են Դահլիճի մեծ Ծիծեռնավանքի որմնակարների որոշ հատվածներ: Ծիծեռնավանքում առկա են 7-րդ դարի որմնակարներ, որոնց վիճակը շատ անմիջապես էր, եւ դրանց ձեռք տալ, առավել եւս հանել, հնարավոր չէր: Դրանք հանելու համար անհրաժեշտ էր մոտ երկու ամիս մշակել, որի ժամանակը, ցավոք, չունեինք: Այդ որմնակարներն ամբողջապես լուսանկարվել են եւ փաստագրվել, արձանագրվել, հաստատվել է դրանց գոյությունը՝ ճարտարապետության եւ շինարարության Ֆայաստանի ազգային համալսարանի աջակցությամբ: Եթե դրանք ոչնչացվեւ, մենք փաստոր կունենանք այդ ամենի մասին միջազգային ատյաններում բարձրաձայնելու համար:

– **Արդեն հայտնի է, որ շատ-շատ արժեքներ չի հաջողվել հանձնված տարածքներից դուրս բերել, պարզապես ժամանակը չի բավականացրել: Հատկապես ինչի՞ համար եք ավստում:**

– Նկատի ունենալով Ազուխի օրինակը, վանքերի ու եկեղեցիների ավերման ու Ցուդայի խաչքարերի ոչնչացման փաստը, եւ դրանք պարզապես փոշիացնելուց հետո միջազգային արձագանքի սնանկությունն ու տկարությունը, ակնհայտ էր, որ այդ արժեքները, գտնվելով իրենց տիրապետության տակ, շատ արագ վերացվելու են՝ հայկական հետքը բացառելու բաղադրական շրջանակներում, եւ վերացնելու են ոչ թե խաչքարը ջարդելով եւ շինանյութ օգտագործելով, այլ պարզապես ոչնչացնելով, որպեսզի մենք այլեւս ապացույց չունենանք: Ցավոք, հարեւան հանրապետությունում անթաքնից թշնամանք է քարոզվում մեր հանդեպ, դրա նախադեպերը մեկը-երկուսը չեն, վերջնական հենց Հուլիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օրինակը, որ հրետակոծության

թիրախ դարձավ:

Արդեն նշեցի, որ Ադրբեջանի վերահսկողության ներքո կան 10-12 հազար հուշարձան, դրանց մեկ-երկու տոկոսը հնարավոր եղավ փրկել: Մենք 200-300 լավ խաչքարեր, տապանաքարեր պիտի բերած լինեինք, սակայն, այդ կարճ ժամանակում հնարավոր չէր, ինչի համար շատ ենք ավստում:

– **Իսկ ասենք, Մայր աթոռը կամ Հայաստանի մշակույթի պատասխանատուներն ի՞նչ են ձեռնարկում, որ կարողանանք աշխարհի մասշտաբով ձայն բարձրացնել եւ հնարավորինս փրկել մեր ճարտարապետական արժեքները:**

– Այս պահին մեր անելիքը «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի միջոցով տարբեր կառույցներին դիմելն է, նրանց տեղից շարժել: Ցավոք անցել են ամիսներ, եւ մինչեւ այսօր ոչ «ՅՈՒՆԵՍԿՕ»-ից է այցելություն եղել, ոչ փաստագրման որեւէ գործընթաց է իրականացվել, ոչ էլ արձագանք կա այդ ատյաններից: Եվ անցած յուրաքանչյուր օրը մեր պատմաճարտարապետական որեւէ հուշարձանի կորստով է չափվում:

– **Իսկ Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցուց տեղեկություն ունե՞ք...**

– Եկեղեցին հրետակոծելուց հետո որոշակի լուսանկարներ կան: Հիմնական զմբեթի ծածկն էլ է վնասված, դա, ըստ ամենայնի, Հուլիի գրավումից հետո է եղել: Իսկ որ տաճարը պղծվել է՝ նրա պատերին սեւերկով գրառումներ կատարելով, համացանցից տեղեկացանք: Այժմ հույս ունենք, որ դա չի շարունակվի, այցելություն այդ եկեղեցի այս պահին անհնար է: Բայց փորձում ենք այցելություն կազմակերպել, եւ հույս ունենք այցելող խմբի մեջ ընդգրկվել, փաստագրել, թե այս պահին ինչ է կատարվում, մինչեւ որ Աստծո կամոք այնտեղ քահանա նշանակվի: Թեկուզ Հուլիի նրանց վերահսկողության ներքո է, քահանան ժամանակ առ ժամանակ պատարագ կմատուցի, մինչեւ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերահսկողության ձեռքից մեկը կգտնվի...

– **Որքանով հասկացանք, բավականին մասունքներ տեղափոխել եք Հայաստան եւ, կարծեք, դրանք ցաքուցով վիճակում են. գոնե հնարավոր է, որ կենտրոնացվեն, գույքագրվեն, փաստագրվեն...**

– ԿԳՄՍ նախարարության կողմից բերվածն ամբողջությամբ տեղավորվել է Մատենադարանի կուռուղու, Մայր աթոռի բերածը ժողովված է Մայր աթոռի տարածքում: Գիտեմ, որ Գորիսի Սուրբ Հովհաննիս եկեղեցում եւ «Միրիադ» իյուրանոցում գտնվող նմուշները եւս կտեղափոխվեն Մայր աթոռ: Այդ ամենը փաստագրված եւ գույքագրված է:

– **Եթե կարելի է, նշեք մի քանի գերատեսչությունների եւ անհատ մարդկանց անուններ, ովքեր այդ ազգօգուտ, աստվածահաճո գործի մեջ ընդգրկված են եղել:**

– Մայր աթոռին աջակցել են հիմնականում գործարարներ, «Արմենիան վայն» ընկերությունը, «Ապավեն» ընկերությունը, «Վահագն եւ Սամվել» ՍՊ ընկերությունը, շատ-շատ անհատներ: «Կոմսնդոս» ռազմամարզական ակումբի տղաները, ամբողջ իրենց թիմով՝ 15 հոգով, երկու-երեք գիշեր-ցերեկ իրենց մեքենաներով եւ տեխնիկայով աջակցել են՝ նաեւ ֆիզիկական աշխատանք մեզ հետ կատարելով:

Մի այցելության ժամանակ 50 հոգուց ավելի մարդ է եղել ընդգրկված այդ գործում: Արժանիկ Հովհաննիսյանը, ով Մայր աթոռի որմնակարների վերականգնող մասնագիտական թիմի ղեկավարն է, իր թիմով՝ 8-10 հոգի, երկու-երեք օր միայն Դահլիճում է որմնակարներով զբաղվել, հետո՝ Ծիծեռնավանքում:

Շատ մարդիկ կան, ցանկը բավականին ընդգրկուն է, ցուցակն ինձ մոտ կա: Աշխատանքներն ամբողջությամբ կազմակերպվել եւ համակարգել է Մայր աթոռի վարչատնտեսական բաժնի ղեկավար Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, ով ի դեպ, ծննդով Տաթևից է:

**ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝
ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

Հորեւլանդ շնորհավոր, Յուրի Լեւոնիչ

Հայրենի եզերքի Էներգետիկայի բնագավառին մեծ նպաստ բերած անձնավորությունը՝ Գրիշա Հայրապետյանը, նույն ինքը՝ Յուրի Լեւոնիչը, փետրվարի 9-ին դառնում է 80 տարեկան:

Պատվական ու բարեկիրթ մարդ, արտադրության բազմափորձ կազմակերպիչ, ով 1964 թվականից մարդկանց լույս ու ջերմություն պարգևտող նույն ոլորտում է: Բարձրացել է Էներգետիկայի կառավարման բոլոր աստիճաններով՝ սկսելով շարքային էլեկտրամոնտյորից, այնուհետև՝ վարպետ, ավագ ճարտարագետ, բաժնի վարիչ, գլխավոր ճարտարագետի տեղակալ, գլխավոր ճարտարագետ, որից հետո սկսեց ղեկավարել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության Չանգեզուրի մասնաճյուղը:

Իր՝ աշխատելու տարիներին հանրապետության Էներգահամակարգում հսկայական փոփոխություններ են կատարվել, եւ Յուրի Լեւոնիչը ոչ թե այս ամենի սոսկ ակնատեսն ու հայեցողն է, այլ այդ փոփոխությունների անմիջական մասնակիցը, եթե չասենք՝ կազմակերպիչը: Չանգեզուրի էջանցը սպասարկում էր նախկին չորս շրջանը՝ Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, ինչպես նաեւ Քաջարանը՝ մերձակա գյուղերով: Հայաստանն անկախություն ձեռք բերելուց հետո՝ 1992-1993 թթ., այդ ամենին ավելացավ Քաջաղաղի շրջանը: Ի դեպ, Հայաստանի անկախության տարիներին հանրապետության Էներգահամակարգը սկսեց զուգահեռ աշխատել Իրանի Իսլամական Հանրապետության Էներգահամակարգի հետ: Եվ այս ամենի հստակ կազմակերպումը եւս ընկած էր բազմափորձ Էներգետիկի ուսերին:

Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ Գրիշա Հայրապետյանը Լենինաբերի դպրոցում ութամյա կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակեց մայրաքաղաքում՝ Էներգետիկական տեխնիկումում: Ավարտելուց հետո գործուղեցին Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ. ճուրհանուրու արտադրամասում աշխատել է հերթապահ էլեկտրամոնտյոր: Խորհրդային բանակից զորացրվելուց հետո շարունակեց նախընտրած մասնագիտությամբ աշխատել, ինչին զուգընթաց սովորեց եւ ավարտեց Մոսկվայի լեռնային ինստիտուտի «Լեռնային աշխատանքների էլեկտրաֆիկացում եւ ավտոմատացում» բաժինը: Կատախեցին ռելեական պաշտպանություն եւ ավտոմատիկայի ծառայության պետի պաշտոնը: Այսպիսով՝ հիմնավորապես անդամագրվեց Չանգեզուրի էջանցերի՝ հարուստ ավանդույթներ ունեցող կոլեկտիվին՝ Էական ավանդ ներդնելով մարզի բնակավայրերի ենթակայանների վերա-

կառուցման աշխատանքներում, բարձրավոլտ էլեկտրագծերի կառավարմանը, բնակավայրերի, ձեռնարկությունների, հեռագրաարտավայրերի (յայլաղներ) էլեկտրաֆիկացմանը:

Դժվարին օրեր ու ժամանակներ էլ են եղել նրա կյանքում, բայց ամենադժվարին Արցախյան գոյամարտի պատերազմական օրերն էին:

«Չանգեզուրի էջանցի» տնօրենի պաշտոնը ստանձնեց 1992-ի դեկտեմբերին, երբ մեզ պարտադրված պատերազմը սկսել էր ավերածություններ գործել:

Պարբերաբար իրականացվող հրետակոծություններից տուժում էին նաեւ ենթակայանները, տրանսֆորմատորները, էլեկտրագծերը: Բայց ցրտի եւ խավարի այդ օրերին առանց Էներգամատակարարման չի մնացել ոչ մի առաջին կարգի սպառող՝ հիվանդանոց, հացի գործարան եւ այլն: Մասնաճյուղի տնօրենն ուղիներ էր փնտրում (եւ գտնում էր) Էներգիա մատակարարել Կապանի լեռնահարստացման կոմբինատին, եւ քաղաքի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկության արտադրական զարկերակն այդ դժվարին օրերին համաչափ էր բաբախում՝ ակամա թեթեւացնելով պատերազմական իրավիճակի մեջ հայտնված մարդկանց հոգսը: «Նույնիսկ մոսկվաներից եկածները զարմանում էին մեր Էներգետիկ համակարգի հուսալիության վրա», - մի աղիթով ասել է Յուրի Լեւոնիչը:

Կառավարական պարգևներ շատ է ստացել, բայց Ներքուստ կարեւորում է 2004-ին ԱՊՀ երկրների Էներգետիկայի խորհրդի որոշմամբ «ԱՊՀ վաստակավոր Էներգետիկ ճարտարագետ» կոչման արժանանալը:

Այս ամենից զատ՝ Յուրի Լեւոնիչն այն հաստատ համոզմունքն է ունեցել, որ աշխատանքում հաջողության հասնելու ամենակարճ ուղին օրինակելի ընտանիք ունենալն է: Ծիշտ այնպես, ինչպես ձեռակերպել է հայ դասականը՝ գորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ: Ինքն էլ աշխատավոր գերդաստանի ծնունդ է: Հայրը՝ Լեւոնը, կրթություն չէր ստացել, բայց սիրում էր սեղան ղեկավարել, պատմում են նրա թամադայության հետ կապված զվարճապատում դրվագներ: Կրթության հարգը բարձր էր նրա ընտանիքում, եւ սիրում էր կատակել, թե՛ բացի ինձնից մերոնք դպրոցը մեղալով են ավարտել: Այդ ամենի հիմքը դրել է վաստակաշատ մանկավարժ կինը՝ Սուսաննա Բաբայանը:



Ուսման հանդեպ սերն ու նվիրումն անցել են որդիներին, ովքեր հիմնավոր կրթություն են ստացել, որից հետո կարեւոր պաշտոններ վարել: Ավագը՝ Համետը, մասնագիտացել է սրտաբանության բնագավառում, բժշկական գիտությունների դոկտոր է, «Էրեբունի բժշկական կենտրոնի» սրտաբանական կլինիկայի ղեկավարը, ՀՀ առողջապահության նախարարության խորհրդատու՝ սրտաբանության գծով: Շատ-շատերին է երկրորդ կյանք պարգևել՝ սրտային բարդ վիրահատությունների շնորհիվ: Հատկապես ուշադիր են հոգատար է հայրենակիցները հանդեպ: Միջնեկը՝ Սամվելը, երկար ժամանակ ղեկավարել է Մեղրու մաքսակետը, կրտսերը՝ Աշոտը, «Հայփոստ» ՓԲ ընկերության Կապանի մասնաճյուղի տնօրենն էր, այնուհետեւ ընտրվել է Կապան համայնքի ղեկավար, պաշտոնավարել մինչեւ 2018 թ. մայիսը:

Ընտանեկան ավանդույթները շարունակում են թողնել, ովքեր արդեն ինքնուրույն քայլեր են անում գիտության եւ այլ բնագավառներում:

Միանգամայն օրինական հպարտությամբ վաստակաշատ այրը դիմավորում է իր կյանքի ութերորդ տասնամյակը:

«Սյունյաց երկիր» էլ լիաթոք ատում է՝ հորեյանդ բյուր անգամ շնորհավոր, Յուրի Լեւոնիչ, առողջ լինես եւ, ինչպես միշտ, հարազատական ջերմությամբ ու մտերիմ մարդկանցով շրջապատված:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Արթուր Դավթյանը Սյունիքում ամփոփել է մարզի դատախազության եւ իրավապահ մյուս մարմինների 2020թ. աշխատանքների արդյունքները

Սկիզբը՝ էջ 2

Խուզական գործիքակազմի կիրառությամբ գործուն քայլեր ձեռնարկել մարզի տարածքում բնակչության մոտ հնարավոր կուտակված ապօրինի զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ՝ շեշտելով այս աշխատանքի կարեւորությունը հատկապես հանրապետությունում ներքին անվտանգության ապահովման, հրազենի կամ այլ զինատեսակների կիրառմամբ հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ՝ գլխավոր դատախազը գոհունակությամբ է հայտնել 2020 թ.՝ հատկապես Սյունիքի մարզի համար ծանրագույն տարվա ընթացքում, արտակարգ դրության, ռազմական դրության պայմաններում, դեպի Արցախ եւ հակառակ ուղղությամբ տրանսպորտային, տեխնիկական միջոցների եւ մարդկանց անսահման հոսքի պայմաններում մարզում օրինապահության, հասարակական կարգի ապահովման ուղղությամբ իրավապահ մարմինների մարզային կառույցների կատարած աշխատանքը: Արթուր Դավթյանը նշել է, որ 2021թ. բացարձակ առաջնահերթություն է մարզի բնակչության բնական կենսագործունեության, հատկապես սահմանամերձ դարձած բնակավայրերի բնակչության անվտանգության ապահովումը, կյանքի, ազատ տեղաշարժի եւ կենցաղավարման հիմնարար իրավունքների երաշխավորումը՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով ինչպես հանրապետական, այնպես էլ հատկապես համայնքային մարմինների եւ մարզում ծառայություն իրականացնող ՌԴ սահմանապահ ուժերի ստորաբաժանումների հետ:

Ելնելով առանձին հանցատեսակներով նախորդ տարվա ընթացքում արձանագրված միտումներից՝ ՀՀ գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարություններ է տվել նաեւ քրեական վարույթներով իրականացվող նախնական բնութագրման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագիրը «Ֆինանսական մասնակցային մոտեցման» բաղադրիչի շրջանակներում «Խուսափում» ՀԿ-ի միջոցով հայտարարում է դպրոցների համար ծրագրերի մրցույթ

Մրցույթը նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի 4 թիրախային քաղաքների՝ Կապան, Քաջարան, Մեղրի, Ագարակ դպրոցների համար: Լավագույն ծրագրի համար տրամադրվող գումարի չափը կազմում է մինչեւ **1,500,000 ՀՀ դրամ**: Դպրոցի կողմից ներկայացվելիք ծրագիրը պետք է համապատասխանի հետեւյալ սկզբունքներին.

- պարունակի բնապահպանական բաղադրիչ,
- պարունակի էկոլոգիական բաղադրիչ,
- ապահովի կայունություն եւ շարունակականություն,
- ունենա կրկնօրինականություն,
- լինի ցուցադրական եւ նորարարական,
- ապահովի աշակերտների մասնակցությունը ծրագրի իրականացման գործընթացին,
- լինի իրատեսական՝ ծրագրի բյուջեի տեսանկյունից
- լինի իրատեսական՝ ծրագրի իրականացման ժամկետների (մինչեւ 3 ամիս)տեսանկյունից

Յուրաքանչյուր դպրոց կարող է ներկայացնել միայն 1 ծրագիր: **Ծրագրերի ընդունման վերջնաժամկետը՝ 15.02.2021**

«ԽՈՒՄՏՈՒՓ» Բնապահպանական ՀԿ **Հեռ.՝ (+374 77) 13 18 01**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ // «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագիրը «Ֆինանսական մասնակցային մոտեցման» բաղադրիչի շրջանակներում «Խուսափում» ՀԿ-ի միջոցով հայտարարում է տնային տնտեսությունների համար փոքր ծավալի բիզնես-ծրագրերի մրցույթ

Մրցույթը նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի 4 թիրախային քաղաքների՝ Կապան, Քաջարան, Մեղրի, Ագարակ տնային տնտեսությունների համար: Մեկ փոքր ծավալի բիզնես-ծրագրի համար տրամադրվող գումարի չափը կազմում է մինչեւ **700,000 ՀՀ դրամ**:

Տնային տնտեսությունների համար Փոքր ծավալի բիզնես-ծրագիրը պետք է համապատասխանի հետեւյալ սկզբունքներին.

- լինի կայուն եւ շարունակական,
- լինի իրատեսական՝ ծրագրի բյուջեի (մինչեւ 700,000 ՀՀ դրամ) տեսանկյունից,
- լինի իրատեսական՝ ծրագրի իրականացման ժամկետների (մինչեւ 3 ամիս) տեսանկյունից,

- բացառի կամ հնարավորինս նվազեցնի շրջակա միջավայրի եւ բնության վրա բացասական ազդեցությունը,
- ստեղծի նոր աշխատատեղեր/ապահովի զբաղվածություն,
- նկարագրի հնարավոր ռիսկերը եւ դրանց հաղթահարմանը ուղղված միջոցառումները,
- նկարագրի ակնկալվող արդյունքը եւ դրա ազդեցությունը ընտանիքի վրա:

Յուրաքանչյուր տնային տնտեսություն պետք է ներկայացնի միայն 1 բիզնես-ծրագիր: Ծրագրում չնշել անուն ազգանուն, հասցե, հեռախոսահամար:

Ծրագրերի ընդունման վերջնաժամկետը՝ **26.02.2021թ.**:

Կապանի եւ Քաջարանի բնակիչները ծրագրերը ներկայացնեն բ. Կապան, Շահումյան փողոց 4/1 (նախկին կենցաղի շենք) հասցեով, իսկ Մեղրու եւ Ագարակի բնակիչները՝ բ. Մեղրի, Աղեյան 3 (Կանանց ռեսուրս կենտրոն) հասցեով: «ԽՈՒՄՏՈՒՓ» Բնապահպանական ՀԿ

Հեռ.՝ (+374 77) 13 18 01, (374 93) 02 55 35

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԵՐԿ» ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՐԷ Ե 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

☎ 3301, Սյունիքի մարզ, բ. Կապան, Շահումյան 20/32:
📞 (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru
🌐 www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Թ՝ Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ բ. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 10.02.2021թ.: